

Կոյս Մարիամ, Կոյս Տիրածին, Աստուածածին օգնեա՛ խաւարեալ գերոյս...
 Վ. Կոյր Ասապով քանի կաս քուն, մեղայ ասա՛ լեր արթուն...

Տներու սկզբնակապ գրերը՝ ԱՍՍՊՈՎ(է) :
 Ձեռ. Berlin, Ms. Or. oct. 446, 176 ր
 (Ժէ) : Վիեննայի Մխիթ. Մատ., Թ. 577,
 3 ա (ԺԸ) : Քէչիչեան՝ Յուլիանի հայ. ձեռ. Չմմառու, Թ. 73, 176 ա (Ժէ) . 298, 80 ր
 (Ժէ) : Ձեռագիր Տաղարան Ա. Անտոնեանի (ի Պարիս), Թղ. 130 ր (1690) :

4. Տաղ Աստուածածնի Ասապովի ասացեալ :

Արքայաչէն տաճար Բանին,
 խորան կաղմեալ անուշահոտ բուրվառին.
 Վ. Պաւարեալ Ասապովիս վերաւորեալ գրերիս Փրկեա ի հրոյն հոգիս...

Տներու սկզբնակապ գրերը՝ ԱՍՍՊՈՎ-Վի(ց) :

Ձեռ. Քէչիչեան՝ Յուլիանի հայ. ձեռ. Չմմառու, Թ. 73, 178 ր (Ժէ) : Էջմիածին, Թ. 2339, 461 ա (Ժէ) :

5. Այլ տաղ Ս. Աստուածածնի, Ասապովի ասացեալ :

Վ. Խեւ Ասապով, քանի դատիս դու հետ ի մեղաց .

Ձի արժանի լինիս խաչին լուսոյ նա քեզ ծագէ լոյս :

Գօլպար չամանդ դեօ ըտանդաս բուրբջայ նայ դուրաս...

Սկզբնակապ գրերը ինկած է ձեռագրին մէջ :

Ձեռ. Քէչիչեան՝ Յուլիանի, Թ. 73, 178 ր և 181 ա (Ժէ) :

Թերեւս ժամանակը յայտնէ Ասապովի անունով ուրիշ տաղեր ալ¹ :

Հ. Ն. ԱԿՈՆՆԵՆ



¹ Հ ա ն ո գ է ս Ա մ ս օ ր ե ա յ, 1930, էջ 594—595 հրատարակած էի Պարսամ Տրապիզոնցոյ տաղն ի վերայ Ակոսայի : Միտ չէի գրած այն ժամանակ, թէ տաղս տարիներ յառաջ ծանօթացուած է Կ. Կոստանեանցէ, Նոր ժողովածու, Ա. (Թիֆլիս 1892), էջ 57—60 «Վասն Ակոսայի», հանուած 1695ին գրուած Տաղարանէ մը : Կոստանեանցի օրինակը շատ աւելի աղաւաղուած բնագիր մը կ'ընծայէ, ուր դուրս ինկած են նաեւ վերջին երկու տուները. որուն հետեւութեամբ անծանօթ մնացած է տաղին հեղինակը :

ԱՂԵՔՍԱՆԳՐ ՄԱՆԹԱՇԵՎՆԵՑ

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՎԱՐՆԵ ԵՒ ԲԱՐԵԳՈՐԾԸ

Յիշողութիւններ՝ իր մահուան 20 ամեակի առթիւ :

(Շարունակութիւն)

Ձ .

Պետերբուրգում թէ՛ Ֆիննասական և թէ՛ Նոյն իսկ կառավարչական շրջաններում սկսել էին անհանդուրձանալ Բաքուի նաւթահողերի հետզհետէ օտար դրամատէրերի ձեռքն անցնելը տեսնելով, թէ եւ միեւնոյն ժամանակ օտար դրամապիսի ներմուծումն և կիրառումը օգտակար էին գտնում : Այս հանդամանքներում Պետերբուրգում լուր տարածուեց թէ Մանթաշեանց էլ բանակցութիւն է վարում անգլիացիների հետ իր ամբողջ ձեռնարկութիւնը ծախելու : Լուրն անհիմն չէր : Անգլիացիք, իրենց գնած նաւթահողերի յաջողութիւնից խրախուսուած, իրօք առաջարկել էին Մանթաշեանցին, որ նա էլ ծախէ : Մանթաշեանց և Արամեանց ի սկզբան նոյնպէս տարուեցան այդ ընդհանուր հոսանքից, մանաւանդ, որ իրենց խոստացուած գինը բոլորովին անսպասելի էր իրենց համար : Այն գործն, որ իրենք 2 տարի յառաջ էին 20.000.000 ռուբլի : «Ձեռն ընդունի այս գինը, երկու միլիոն անգլ. սովի չեն տայ» ասում էր ինձ Մանթաշեանց : Բայց այդ առաջարկութիւնն անողները չընկրկեցան այդ մեծ գումարի առջև, միայն իրաւունք ուղեցին, որ իրենց կողմից «երկուեալ հաշուապահներ» ուղարկեն գործի կացութիւնը քննելու և պայմանաժամ խնդրեցին : Մանթաշեանց ընդունեց այդ պայմանը : Ես շատ լաւ յիշում եմ թէ ինչպէս տեղի ունեցաւ այդ «քննութիւնը» : Եկան անգլիացի «երկուեալ հաշուապահներ», որոնք առանց մի բառ ուսերէն կարգալ կարողանալու, սկսան մանրամասն քննել ուսերէն գրուած հաշուեմատեանները : Նրանք ինդրում էին, որ իրենց թարգմանները միայն հաշիւների վերնագիրները :

Հաշուապահներն իրենց քննութիւնը դեռ չէին վերջացրել երբ ուսական դրամատիրական շրջանները հեռագիրներով սկսան առաջարկութիւններ անել : Ռուսական մի մեծ

բանկի առաջնորդութեան տակ կազմուել էր մի ուժեղ դրամատիրական խումբ, որ որոշել էր գնել Մանթաշեանցի գործն և չթողնել, որ նա օտարանայ : Մանթաշեանց և սկսել էր տատանուել և նա հիմնական պատճառներ ունէր այս տատանման համար : Առաջին այն էր, որ երբ անգլիացիներէց յետոյ ուս դրամատէրերն էլ սկզբունքով ընդունեցան նրա նշանակած խոշոր գումարը (20 միլիոն ռուբլի) նա սկսեց հաշուել, որ պարտաւորութիւնները իր գործն իսկապէս արժէ այդչափ, քանի որ վերջին 2—3 տարին նա այնչափ դուրս եկածու էր ունեցել, որ չափ էր իր հիմնադրամը և դեռ նաւթի գները բարձրանում էին : Հում նաւթի գինը պուտը 4—5 կոպէկից հասել էր 15 կոպէկի և դեռ յոյս կար աւելնալու . նոյն համեմատութեամբ բարձրացել էր նաեւ նաւթային արդիւնքների վաճառման գինը . արդիւնարեւութեամբ արտադրուած նաւթի քանակութիւնն էլ շարունակ աճում էր, տարեցտարի : Երկրորդ, նա մտատանջում էր թէ իր գործի օտարների ձեռքն անցնելովը հարկւրաւոր հայ պաշտօնեաներ և հազարաւոր հայ գործաւորներ, որոնք իրենց մշտական ապրուստն ունէին նրա չնորհիւ, կարող էին դուրս գրանից զրկուել . և վերջապէս ինքն էլ, թէ եւ ձեռութեան մօտեցած բայց դեռ առոյգ էր, և իր համար չափազանց դժուար էր իր սովորած ու փայլայած առեւտրական ասպարէզից քաշուիլն ու անգործ մնալը : Այս զգածմունքները վերջ ի վերջոյ յաղթող հանդիսացան . նա խղեց իր բանակցութիւնը անգլիական խումբի հետ, իսկ ուսական խումբին էլ այնպիսի պայմաններ առաջարկեց, որով ինքը պիտի մնար դարձեալ տէր ու ղեկավար ընդհանուր գործին : Ռուսներն ի սկզբան տհաճութեամբ լսեցին այս պայմաններն . ևս յիշում եմ թէ ինչպէս զայրացաւ Մանթաշեանց, երբ նրան դիտել տուին թէ, սկզբնական պայմանագրութեան համաձայն իրենք արդէն մտցրել էին Ռուսական Պետական բանկը՝ պահանջուած մէկ միլիոն ռուբլի դրաւականը . «Ես այս ըրովիս կը վերադարձնեմ Ձեր մէկ միլիոն ռուբլին, գոչեց նա, բայց ոչ մի կերպ չեմ համաձայնի Ձեր առաջարկածին : Քանի որ չեմ, ևս պիտի լինի իմ գործի տէրն ու ղեկավարը» : Ռուսները ստիպուեցան զիջել և նոր համաձայնութիւն կայացաւ նրանց մէջ, ըստ որում

Մանթաշեանց և Արամեանց պիտի ծախէին իրենց ձեռնարկութեան 1/3ը միայն, միեւնոյն 20 միլիոնի հաշուով : Ըստ այսմ 1899 Յունիսին կազմակերպուեց մի նոր ընկերութիւն, որ կոչուեց «Ա. Ի. Մանթաշեանցի ֆաբրիկապրոմիսլեննո և տրոցոբոյ ընկերութիւն» (Нефтепромышленное и торговое общество А. И. Манташев и К^о = Société de l'Industrie de naphte et du Commerce A. I. Mantacheff & Co.) : Նոր ընկերութեան Կանոնադրութիւնը ստորագրուեց երկու կողմից և ներկայացուեց Կառավարութեան ի հաստատութիւն, որ և անմիջապէս տեղի ունեցաւ : Նոր ընկերութեան դրամապուլի էր որոշուած 22.000.000 ռուբլի, 88.000 ակցիայի վրայ բաժնուած, իւրաքանչիւրը 250 ռուբլի արժէքով : Այդ գումարից 2.000.000 ռուբլին շարժական հիմնադրամ էր (fonds de roulement) իսկ 20.000.000 ռուբլին պիտի վճարուէր նախկին «Ա. Մանթաշեանց և Ընկ. Առեւտրական Տան» ամբողջ գոյքը գնելու համար : Այս քսան միլիոնի ակցիաներից Մանթաշեանց և Արամեանց նոր կապակցութեան համաձայն, ծախեցին միայն 1/3ը կանխիկ դրամով իսկ մնացած 2/3 պահեցին իրենց ձեռքում : Այս կերպով Մանթաշեանց գանձեց 5.340.000 ռուբլի իսկ Արամեանց 1.330.000 ռուբլի, որ նշանակում էր թէ նրանք իրենց 2 տարի յառաջ դրած կամ ճշտագոյնը որոշած 3 միլիոնի կրկնապատիկը կանխիկ ստանալուց յետոյ դարձեալ տէր էին մնում իրենց գործի 2/3ին որից Մանթաշեանցին բաժին ինկաւ 10,665.000 ռուբլու ակցիաներ, իսկ Արամեանցին՝ 2,665.000 ռուբլու : Բայց պէտք չէ կարծել թէ նրանց հարբտութիւնը սահմանափակուած էր դրանով : Նրանց իւրաքանչիւրը գէթ մի այդչափ էլ ուրիշ ունէր, իրրեւ շարժական կամ անշարժ գոյք : Երբ նրանք նաւթային գործի ձեռնարկեցին, իրենց երազումն էլ չէին կարող երեւակայել թէ այդչափ շուտ և այդչափ սաստիկ պիտի հարստանան...¹ :

¹ Արամեանց՝ Պետերբուրգից վերադարձին ծիծաղելով պատմում էր թէ ինչպէս էին նրանք դանձել և իրենց մէջ բաժնել այդ հարստութիւնը : Նրանց պատուէրի համաձայն «Արամեանցի Առեւտրի Ռուսական Բանկը» (Русский для внешней торговли банк — Banque Russe pour le Commerce Etranger), որ այդ ուսական խումբի գլխաւորն էր, գնել էր գանաղան պետական և արդիւնարեւտրական արժեթղթեր : Երբ բանկի կառավարները դրել են նրանց առջև այդ արժեթղթերի ժողովածուն, Մանթաշեանց սկսել է բաժնել . ամէն մի տեսակից 4 հատ ինքն է

նեաները տեղացի հայեր եւ փարսիներ⁷: Ապրանքն ուղարկուած էր նրանց՝ Բաթումից, օտար շոգենաւերով, որովհետեւ Մանթաշեանցի սեպհական նաւերը հազիւ էին բաւականանում Միջերկրականի եւ Սեւ ծովի համար: Հայկական «Ոչխար» մարկան յաջողութեամբ մրցում էր Հնդկաստանում անգլիական եւ ամերիկական զանազան մարկաների հետ:

Բ. Պարսից ծոց: Կառավարութիւնը՝ այնտեղ ուստական ազդեցութիւնը զօրացնելու նպատակով, ընդդէմ անգլիականին, մտերմական գրութեամբ դիմել էր բոլոր ուստական մեծ արդիւնաբերական եւ առեւտրական տներին, ի մէջ որոց նաեւ Մանթաշեանցին, որ Պարսից ծոցում իրենց սեպհական մասնաճիւղերը հաստատեն եւ ուստական ապրանք տարածեն: «Ռուսական Շոգենաւային Ընկերութիւն» (Русское Пароходное общество) էլ, որ կառավարութիւնից արդէն որոշ դրամական նպաստ էր ստանում, հրահանգ էր ստացել յատուկ երթեւեկութիւն հաստատել Սեւ ծովի նաւահանգիստներին — առանձնապէս Օղէսա եւ Բաթում — եւ Պարսից ծոցի մէջ, կանոնաւորապէս գործելու համար: Այս կերպով ուստական ապրանքն էլ պիտի ուղարկուէր միայն ուստական դրօշակ կրող շոգենաւերով: Մանթաշեանցի իսկոյն ընդ առաջ դնաց այդ առաջարկութեան: Երբ նա որ եւ է տեղ գործ էր ուղում սկսել, մանաւանդ հեռուոր տեղեր ճիւղեր հիմնել, ամէնից յառաջ աշխատում էր «մարդ» գտնել, ինչպէս նա ասում էր, այսինքն այնպիսի մէկն, որ լինէր the right man in the right place (որոշ տեղի համար յարմարագոյն անձը): Նա յիշեց իր նախկին յարաբերութիւնները Պարսկաստանի հետ, գտաւ մի փորձուած պարսկահայ վաճառական, եւ ուղարկեց նրան քննութեան համար: Երբ սրանից մանրամասն զեկուցում ատաւ, որոշեց բանալ երկու տեղ մասնաճիւղ, Բէնդէր Աքրասում եւ Բէնդէր Բուշիրում եւ անմիջապէս մեծ քանակութեամբ «Ոչխար» ուղարկեց Պարսից ծոցն, որ շուտով գուրս մղեց այնտեղից բազմաթիւ օտար մարկաները:

Գ. Եգիպտոս. Նախորդ Գլխում արդէն խօսել եմ այս կարեւոր ճիւղի մասին: Ենթոր-

⁷ Փարսիները Պարսկաստանից տեղափոխուած գրադաշտական պարսիկներ են, որոնք յայտնի են այնտեղ իբրեւ ճարպիկ վաճառականներ:

հիւ այնտեղի ընդհանուր կառավարիչ Յովհ. Մութաֆեանցի՝ Մանթաշեանցի ապրանքը հեղահեղ գրաւել էր ոչ միայն Ստորին այլ նաեւ Վերին Եգիպտոսի շուկաները եւ տարածուել էր մինչեւ Սուդան: Երկու հզօր մրցակից ունէինք այնտեղ, մէկը ամերիկական միւսը անգլիական հսկայ ընկերութիւններ. այնու ամենայնիւ մեր, հայկական ընկերութիւնը յաջողել էր իր ձեռքն անցնել Եգիպտոսի քարիւղի ամբողջ առեւտրի 1/3-ն եւ նոյն իսկ աւելի: Վերջին տարիները Մանթաշեանց ընկերութիւնն իր մասնաճիւղերը բացաւ նաեւ Սիրիայում (Բէյրութ) եւ Պաղեստինում (Երուսաղէմ), որոնք գտնուում էին Աղեքսանդրիայի ճիւղի տնօրէնութեան տակ:

Դ. Թիւրքիա: Այստեղ շարունակում էին գործել այն մասնաճիւղերն, որոնք հիմնուած էին վաղուց, ինչպէս պատմել եմ: Զմիւռնիայում Պ. Ղուկաս Եսայեան եւ Սալոնիքում Պ. Թ. Փարէմագեանց նոյն եռանդով վարում էին գործերն եւ տարածում Մանթաշեանցի ապրանքը: Փոփոխութիւն տեղի ունեցաւ միայն Կ. Պոլսի ճիւղի ղեկավարութեան մէջ: Պ. Գրիգոր Կիւմիւշկերտան իր յառաջացած տարիքի պատճառով գործից քաշուելով, Մանթաշեանց նրա տեղ որոշեց իր Մանչեստրի վաղմի ընկերներից Գառնիկ Յովակիմեանին, իսկ սրա մահից յետոյ նշանակեցինք տեղացի Գառնիկ Սերոբեանին, որին յաջորդեց իր որդին:

Ե. Անգլիա: Այս շատ կարեւոր շուկայի համար մենք վաղուց ծախում էինք մեր ապրանքը, զանազան նաւթային արդիւնքներ՝ կէրօսին, մեքենական իւղեր, մազուտ, սօլար եւ այլն, ամբողջ նաւարեւորով, յանձնելի Բաթումի նաւահանգստում, անգլիացի զնորները ուղարկած շոգենաւերին: Բայց Մանթաշեանց առիթ էր որոնում աւելի ինքնուրոյն եղանակով հաստատուելու համար Անգլիայում: Եւ այդ առիթը ներկայացաւ: Ղուկասեան եղբայրների նախաձեռնութեամբ եւ Բաքում անգլիական՝ Oleum համառօտութեամբը յայտնի՝ մեծ ընկերութեան մասնակցութեամբ, կազմուեց մի նոր ընկերութիւն՝ Homelight տիտղոսի տակ, յատկապէս Անգլիայի համար որի գլխաւոր գրասենեակը գտնուում էր Լոնդոնում: Այս եղանակով Մանթաշեանց եւ Ղուկասեան իրենց ապրանքն սկսան սպառել անգլիական

շուկաներում, առանց օտարի միջնորդութեան: Մանթաշեանցի Լոնդոնի ներկայացուցիչն էր Յովհ. Անդրէասեան, իր նախկին, Մանչեստրի ընկերներից մէկն, վերին աստիճանի պարկէշտ մի հայ, որ «պատուաւոր հաշտարար դատաւորի» զերբին էր արժանացել Անգլիայի պէս երկրում: Homelight իրեն ղեկավարը Արթուր Գոլդսթոնը Ղուկասեանն էր, որ յաջող տանում էր գործն, ինչպէս անձամբ տեսայ երբ 1904ին Լոնդոն էի գնացել:

Զ. Գաղղիայում քարիւղի եւ առանձնապէս կէրօսինի ներմուծումը տարբեր համաձայնք ունէր: Որպէս զի իր երկրում գործարանական կեանքը զարգանայ եւ աշխատաւորները գործ ունենան, Փրանսական կառավարութիւնը ծանր մաքս էր նշանակել զուած մաքուր կէրօսինի (լուսաւորութեան համար գործածուած) համար եւ համեմատարար թեթեւ՝ անմաքուր քարիւղի համար: Այս պարագան տարօրինակ կացութեան մէջ էր դնում քարիւղի առուտորով պարագողներին: Երբ Գաղղիայի համար կէրօսին էինք ծախում, գնողները հետ գրուած պայմանի համաձայն, զտուած մաքուր կէրօսինը կանխապէս դիտմամբ ապականում էինք, նրա մէջ 8—10% հում նաւթ կամ մազուտ խառնելով, որպէս զի գաղղիական թեթեւ մաքսի ենթարկուել եւ պէտք ունենայ Գաղղիայում նորից զտուելու: Խնդիրը տարբերում էր մեքենական իւղերի (huiles de graissage, lubricating oils) նկատմամբ որոնք կարող էին իրենց բնական, մաքուր վիճակի մէջ ներմուծուել եւ շատ մեծ սպառում ունէին: Մանթաշեանց յարաբերութեան մէջ մտաւ մի մեծ գաղղիական ընկերութեան հետ, Societé Lille-Bonnières & Colombes, որ յանձնառաւ միայն Մանթաշեանցի քարիւղը ծախել, իր բաղմամբ մասնաճիւղերի միջոցով: Այս ընկերութիւնը Մանթաշեանցի շուկայում մեծ զորութեամբ ծախեց ընդարձակեց իր գործունէութեան շնորհիւ եւ սկսեց Մանթաշեանցի ապրանքը շրջանն եւ սկսեց Մանթաշեանցի (Բարսէլոն) եւ ծախել նաեւ Սպանիայում (Բարսէլոն) եւ Զուիցերիայում: Այս ծաւալումը պատճառ դարձաւ մեծ մրցումի՝ նրա եւ André fils գաղղիական մի այլ մեծ ընկերութեան մէջ, որ աւելի հին եւ աւելի զօրեղ տուն էր: Մրցումն այնքան սաստիկ էր, որ André դիմել էր մի ծանօթ անձի միջնորդութեան, որ

համոզէ Մանթաշեանցին եւ այս մրցումը զաղբեցնել տայ: Այս միջնորդը ոչ այլ ոք էր եթէ ոչ Պ. Գալուստ Կիւլպէնկեան, որ մտերմ յարաբերութեան մէջ էր Մանթաշեանցի հետ: Ես այդ միջնորդին եկել էի Պարիզ: Մանթաշեանց ինձ ծանօթացրեց Պ. Կիւլպէնկեանի հետ եւ այս խնդրի կարգադրութիւնը թողեց իմ վրայ: Պ. Կիւլպէնկեանի պատճառարանութիւնները լսելով ես յանձն առի ի կատար ածել նրա միջնորդութիւնը: Տեսնուեցայ երկու գաղղիական ընկերութիւնների վարիչները հետ եւ յաջողեցայ մերձեցում յառաջ բերել նրանց մէջ, երկու կողմի համար էլ նպաստաւոր պայմաններով, որով մրցումը զաղբեցաւ եւ մենք շարունակեցինք մեր ապրանքը ծախել թէ Գաղղիայում եւ թէ Սպանիայում ու Զուիցերիայում: Մի ուրիշ անգամ եւս, երբ դարձեալ Պարիզ էի գտնուում առիթ ունեցայ զբաղուել Պ. Կիւլպէնկեանի յարուցած մի ուրիշ միջնորդութեամբը: Մի մեծ անգլիական տուն, որ ընդարձակ գործեր ունէր Զինաստանում, խնդրել էր նրան, որ համոզէ Մանթաշեանցին, որ իր քարիւղը Զինաստանում ծախէ նրա միջոցով: Մանթաշեանց խնդիրը թողեց իմ հայեցողութեան: Կարծեմ 1908ի ամսուն էր, Պ. Գալուստ Կիւլպէնկեան գնացել էր հարաւային Գաղղիա Côte d'Azureի ծովեզերքը: Ես նրան գրեցի իմ գալն եւ պատրաստակամութիւնս այդ մասին տեսակցելու նրա հետ: Պ. Կիւլպէնկեան անմիջապէս եկաւ Պարիզ եւ մենք Hotel Ritzում տեսնուելով խնդիրը կարգադրեցինք: Սակայն այդ անգլիական տունը շարդարադրեց մեր յոյսերը եւ Մանթաշեանց որոշեց կտրել նրա հետ իր յարաբերութիւնները: Զինաստանն անյոջաղ անցաւ մեզ համար:

Այժմ գանք Մանթաշեանցի բարեգործութիւններին:

Ե. Խորհրդանշան Հայրիկ Բարումում: Կաթողիկոս օժուելուց յետոյ Խորհրդանշան պարտաւոր էր ներկայանալ ուստաց կայսեր իր հաւատարմի հպատակութեան զգաժմունքը յայտնելու համար: Ուստի Պետերբուրգ ուղևորուելու համար, 1895 Փետրուարին նա եկաւ Բաթում: Մանթաշեանց Թիֆլիսում ներկայացել էր կաթողիկոսին եւ խնդրել, որ

չատերը կամենում են, որ իրենց լուսան էլ գտնուի այդ նորոգութեան ծախքի մէջ: Այն ժամանակ որոշուեց, որ եկեղեցու արտաքին մասն, այսինքն պատերի սպիտակումը կատարուի ծխականներին հաշուին, իսկ էական մասն, այն է ներքին նորոգութիւնները, զարդարանքն եւ այլ հարկ գատուած ընդարձակումը կամ յաւելումները Մանթաշեանց հողայ: Այդպէս էլ եղաւ: Մանթաշեանց աւատորէն ծախսեց եւ կատարեց ինչ որ ճարտարապետն ու հողեւոր իշխանութիւնը բարւոք համարեցին Թիֆլիսի նման մեծ հայաբնակ քաղաքի մայր եկեղեցու պայծառութեան համար: Նորոգութիւնը կատարուեց 1901ի վերջերն եւ Խրիմեան՝ 1902 Յունուարին այդ առթիւ Թիֆլիսի հասարակութեան ուղղեալ կոնդակում ի մէջ այլոց գրում էր. «... ի մէջ փառաց տաճարիդ այդորիկ, որ այժմ կանգնեալ կայ եւ որ նորոգեցաւ արովք քո եւ օժանդակութեամբ եւ առատաձեռն նուիրաբերութեամբ Աղեփանդրի Յովհ. Մանթաշեանց, ուխտի՛ր առաջի Աստուծոյ սիրել զազգն քոյ եւ զեկեղեցի...»:

Այս նուիրատուութեան փոխարէն հողեւոր իշխանութիւնը Մանթաշեանցին արտօնութիւն տուաւ, որ եկեղեցու արտաքին գաւիթի մի անկիւնում փոքրիկ դամբարան կառուցանէ իր եւ իր ընտանիքի հանգստեանը ծառայելու:

Էջմիածնի Մայր Տաճարը: Խրիմեան 1903 Մարտի մէջ Թիֆլիս էր եկել: Մանթաշեանց, որ երբեք չէր վրիպում կաթողիկոսի եկած ժամանակը նրան ներկայանալով իր որդիական յարգանքը մատուցանելուց, այս անգամ լուրջ հիւանդութեամբ պառկած էր: Կաթողիկոսն այս լսելով որոշեց անձամբ այցելութեան երթալ եւ միխթարել նրան: Մանթաշեանց՝ իր ննջասենեակում, անկողնում, ընդունեց Ամենայն Հայոց Հայրապետին: Նա մեծապէս զգածուած էր Հայրիկի ցոյց տուած այդ սիրուց եւ հոգատարութիւնից: Այդտեղ էր, որ Մանթաշեանց յայտնեց կաթողիկոսին թէ, ինքը լսել է, որ էջմիածնի Մայր Տաճարն եւս կարօտ է:

Ոչ մի եկեղեցական շինարարական գործ այնչափ զանգաղ ընթացք չէ ունեցել եւ այնչափ արկածների չէ ենթարկուել ինչպէս էջմիածնի Մայր Տաճարի նորոգութեան այս խնդիրը: Մանթաշեանց առողջանալուց անմիջապէս յետոյ իր կողմից մարդիկ ուղար-

կեց էջմիածին, որպէս զի այնտեղ որոշեն թէ ինչ տեսակ նորոգութեան պէտք կայ, ծախքերի նախահաշիւը կազմեն եւ իրեն ներկայացնեն: Ճարտարապետները վերադարձան եւ իրրեւ սկզբնական ծախք որոշեցին 40.000 ռուբլի: Մանթաշեանց էլ այդ գումարը դրեց իր մօրեղբորորդի եւ կառավարիչ Խարազեանցի կարգադրութեան տակ, ըստ այնմ գործադրուելու համար: Բայց ահա սկսաւ նորոգութեան ծրագրերի եւ հակածրագրերի, յատկապէս ինչո՞ք եւ փոփոխումների անվերջ շարանը: Եղան մասնագէտների անվերջ ժողովներ այդ մասին, երբեմն էջմիածնում, երբեմն Թիֆլիսում. գործն այնչափ ձգձգուեց, որ երբ Խրիմեան վախճանուեց, դեռ էջմիածնում ոչ մի վերջնական ծրագիր չէին կարողացել կազմել: Իսկ Տաճարի մասնակի քայքայումը այնպիսի զգալի էր դարձել, որ կաթողիկոսի մահից յետոյ կաթողիկոսական տեղակալ Գէորգ արք. Սուրէնեանց՝ 1908 Յունուարին մի նամակ էր գրել Մանթաշեանցին, որտեղ բացուցի ասում էր. «Մայր Տաճարի տանիքը փճացած լինելով, անձրևի ջրերը սուղուում են եւ սաստիկ խոնավութիւն յառաջացնում: Վնասուած է յատկապէս Գէորգ (Գ.) կաթողիկոսի շինած Թանգարանի տանիքը, մինչև այն աստիճան, որ խոնավութիւնից կարող են վտանգուիլ այնտեղ պահուած գրեթէ անհետն ու հնութիւնները...»: Իրրեւ վերջարան Տեղակալը խնդրում էր Մանթաշեանցից, որ նա անյապաղ հողայ այդ տանիքի նորոգութեան ծախքը. իսկ տաճարի հիմնական նորոգութեան խնդիրը թողնում էր նրա հայեցողութեան: Եւ որպէս զի այս խնդիրն այլ եւս չձգձգուի, նա առաջարկում էր, որ Մանթաշեանց ինքն իր ճարտարապետի հսկողութեան տակ կատարէ, «ինչ նիւթից, որ ինքը յարմար է համարում»: Մանթաշեանց անմիջապէս պատասխանեց թէ ինքը միշտ պատրաստ է կատարելու իր տուած խոստումը, բայց գործի կանոնաւորութեան ինչպէս եւ ապագայ բարոյական պատասխանատուութիւնից զերծ մնալու համար լաւագոյն է գատում, որ ոչ թէ ինքն այլ Հողեւոր Իշխանութիւնն ստանձնէ այդ հողը: Մանթաշեանց թելադրում էր, որ Սուրէնեանց սրբազան իր նախագահութեան տակ Երեսնութեան Յանձնաժողով կազմէ, որ անմիջապէս որոշէ վերջնական ծրագիրն, ոչ

միայն փչացած տանիքի մասնական, այլ բուն Տաճարի հիմնական նորոգութեան համար, որպէս զի անյապաղ գործի սկսուի: Պահանջուած ամբողջ ծախքը նա յանձն էր առնում վնարել: Եւ քանի որ բաղձանք էր յայտնուած, որ ինքն եւս մասնակցի, ուստի իր կողմից այդ Յանձնաժողովին անդամ էր ընտրում յայտնի երաժշտագէտ Կոմիտաս վարդապետին, որ Եւրոպայից դարձել էր եւ գտնուում էր էջմիածնում³:

Տեղակալը շնորհակալութեամբ ընդունեց Մանթաշեանցի առաջարկութիւնն եւ կազմեց այդ Յանձնաժողովը էջմիածնում: Յանձնաժողովն էլ որոշեց հայ նկարիչներին եւ ճարտարապետներին բաղկացած մի Մասնաժողով հրաւիրել Թիֆլիսում, որ կայացաւ Մեարտի, Վ. Տէր-Մովսիսեանի նախագահութեամբ եւ վճուեց էջմիածին երթալով վերստին քննել Տաճարի այժմեան վիճակն եւ ըստ այնմ կազմել ուրուագիծը: Բայց այս Մասնաժողովն էլ իրրեւ իր քննութեան արդիւնք, այնպիսի ծրագիր էր կազմել, որ նորոգութիւն չէր այլ Տաճարի հիմնական փոփոխութիւն: Նա առաջարկում էր՝ «ոչնչացնել կողքի դմբէթների շուրջը իրրեւ ամբողջ շինուած շրջապարիսպը (յօդ. 5). վերցնել արեւելեան կողմի շինութիւնը (Թանգարանը) որովհետեւ անհամապատասխան է տաճարի ընդհանուր ձևին եւ ոճին (յօդ. 6): գլխաւոր սեղանին կից մի նոր լրացուցիչ շինութիւն կառուցանել, աւանդատուն, մասանց խորան եւ այլն (յօդ. 7)»:

Երկար վիճարանութիւն տեղի ունեցաւ այս ծրագրի մասին եւ վերջապէս Յանձնաժողովից ընդունուեց. բայց մինչ այն՝ երկու նոր տարի էր անցել...: Հազիւ 1910 Յունուարին, Յանձնաժողովը հրատարակութեան տուաւ այդ ծրագիրը գործադրելու համար հարկ եղած պայմանները: Սակայն դարձեալ անյաջող: Բողոքներ եղան դրա դէմ էլ, որով հարկ եղաւ նորից փոխել եւ նոր ուրուագիծ կազմել: Նորից էջմիածին հաւաքուեցան ճարտարապետներ, նկարիչներ եւ այլ մասնագէտներ, որոնք նոր քննութիւնից եւ վճիճից յետոյ, այն եզրակացութեան

³ Կոմիտաս վարդապետ Մանթաշեանցի բաղձաթիւ սաներից մէկն էր, նրա հաշուով էր իր երաժշտական ուսումն առել, նա՝ առհասարակ Մանթաշեանցին շատ էր պարտական: Մանթաշեանց մեծ համակրութիւն ունէր Կոմիտասի վրայ, ծախք չէր ինչպէս նրա համար:

Եկան թէ «պէտք չէ փոփոխութիւններ անել տաճարի այժմեան կարգով մէջ» եւ թէ հնարաւոր է տաճարը նորոգել թէ՛ ներքուստ եւ թէ՛ արտաքուստ, առանց այդ հիմնական փոփոխութիւնների: Ըստ այնմ կազմուեց մի նոր ծրագիր, որպէս զի անմիջապէս գործադրուի, սակայն... Երբ այդ վերջնական որոշումը տրուեց, խոստացող բարերարն արդէն փոխուել էր այս աշխարհից...:

Էջմիածնի վեհաքանդ: Տաճարի նորոգութեան հարցն առիթ դարձաւ, որ կաթողիկոսի բնակարանի եւ ընդունարանի վերաշինութեան խնդիրն եւս յուզուի: Ամէնքի աչքերը դարձեալ ուղղուեցան դէպի Մանթաշեանց: Ազգային բարերարը այս անգամ եւս արգարացրեց հայ հողեւորականութեան եւ ժողովրդի յոյսը. նա յանձն առաւ ոչ թէ նորոգել, այլ ի հիմանց կառուցանել մի նոր վիհարան, էջմիածնում, Ամենայն Հայոց կաթողիկոսի դիրքին եւ հանգամանքներին համապատասխան մեծութեամբ: Եւ որովհետեւ՝ այս շէնքի համար եկեղեցական հնօրեայ աւանդութեան, ոճի, ձևի, շինութեան նիւթի եւ այլ այսպիսի կնճառ եւ վիճելի հարցեր չկային, ինչպէս էր Տաճարի նորոգութեան հարցում, Մանթաշեանց վճուեց ինքը, իր ճարտարապետների միջոցով՝ գործը գլուխ բերել: Իսկոյն երկու ճարտարապետ ուղարկեց էջմիածին, որպէս զի տեղն ու տեղը քննեն բոլոր պէտքերն եւ անյապաղ ուրուագիծ կազմեն: Պէտք էր որոշել՝ նախ շինութեան տեղն, որովհետեւ բուն էջմիածնի փոքր շրջանում բաւականաչափ ազատ տարածութիւն չկար այդ նպատակի համար եւ ապա թէ նոր շինութիւնը՝ բացի ի հարկէ կաթողիկոսի եւ եպիսկոպոսների բնակութիւնից, ի՞նչ նպատակների եւս պէտք է ծառայէր: Հարկ եղած խորհրդակցութիւնները կատարուելով որոշուեց՝ շինութիւնը կառուցանել էջմիածնի պատերից դուրս եւ այնպիսի ընդարձակութեամբ, որ նա միանգամայն համազային պատգամաւորական ժողովների համար գումարման տեղ լինէր: Մանթաշեանց ընդունեց այս լայն ծրագիրն եւ կարգադրեց, որ իսկոյն մանրամասն ուրուագիծն եւ նախահաշիւը կազմուին, որպէս զի անյապաղ գործի ձեռնարկուի: Թիֆլիսի Առաջնորդ Սաթուկեանց Գարեգիմար քեպիսկոպոսի նախագահութեան տակ, ճարտարապետներից եւ զեղարուես-

տաղէտներէն բաղկացած մի մեծ ժողովում վերջնականապէս կազմուեց ծրագիրն, որ Մանթաշեանց ընդունեց եւ յանձնեց իր ընտրած հայ ճարտարագետին, որ անյապաղ շինութիւնն սկսի: 1910 Յունիսի Յին էջմիածնում տեղի պիտի ունենար հանդուցեալ Հայրիկի մահարձանի բացումը: Այնպէս յարմար դատուեց, որ վեհարանի հիմնաբեկէն այդ օրը կատարուի: Այդ օրը պատարագից յետոյ բացուեց Սրիմեանի արձանն, որի տապանագիրն, իր յաջորդը Իգմիրլեան կաթողիկոսն էր խմբագրել — «Նուագող վշտից Հայրեմեաց» տիտղոսը տալով Սրիմեան Հայրիկին: Ապա Մատթէոս կաթողիկոսը՝ Երեւանի ուսն նահանգապետի եւ ամէն կողմից այցելութեան եկած խումն բազմութեան ուղեկցութեամբ, Տաճարի բակից՝ «Տրդատայ դարաւայի» միջոցով դուրս ելաւ եւ ուղղուեց դէպի նոր վեհարանի շինութեան տեղն, որ ինչպէս վերեւ յիշեցի, էջմիածնի շրջանավայրից դուրս էր: Հիմնարկութեան օրհնութիւնը կատարելուց վերջը առաջին քարը դրեց Իգմիրլեան կաթողիկոս, ապա նահանգապետն, իբրեւ ուսանական կառավարութեան ներկայացուցիչը, բոլոր ներկայ եպիսկոպոսներն եւ յետոյ Մանթաշեանցի ներկայացուցիչը՝ Գէորգ Շահումեան: Հիմքի մէջ գետեղուց մի պղնձեայ տախտակ, որ հետեւեալ մակագրութիւնն էր կրում.

«Յամի Տեառն 1910 եւ Հայոց ՌՅԾԹ. ի Յ ամսեանն Յունիսի, յաւուր հրաշարառ տօնի Հոգեգալստեան, ի թագաւորութեան Նիկօլա Բ. կայսեր Համայն Ռուսիոյ, ի փոխարքայութեան Կովկասու կոմս Իլարիոն Իվանովիչ Վորոնցով — Դաշկովի եւ ի հայրապետութեանն Տ. Տ. Մատթէոսի Բ. կաթողիկոսի Ամենայն Հայոց, հիմն արկաւ վեհարանին՝ ծախիւք եւ արդեամբք Մեծագործ Բարերարին՝ Աղեքսանդրի Յ. Մանթաշեանցի»:

Այնուհետեւ կաթողիկոսը լիաշուքին օրհնեց բարերարին, յիշելով եւ զովելով նրա բազմաթիւ բարեգործութիւնները: Արարողութիւնից անմիջապէս վերջը՝ կաթողիկոսը հետեւեալ հեռագիրն ուղղեց Մանթաշեանցին, որ այն միջոցին Պարիս էր.

«Այսօր հանդիսաւորապէս օրհնեցինք նոր վեհարանի հիմքը Նահանգապետի ներկայութեամբ: Օրհնում ենք նաեւ Ձեր թանկագին կեանքն եւ Ձեր զուակններին»:

Մանթաշեանց պատասխանել էր.

«Էջմիածին, Նորին Սրբութեան Կաթողիկոսին: Սորապէս զգածուած Ձեր հեռագրից, երկար եւ փառաւոր կեանք եմ մաղթում ի սրտէ Ձերդ վեհախառութեան, ի պայծառութիւն Հայաստանեայց սուրբ Եկեղեցոյ 7 Յունիս 1910 Պարիս»:

Մանթաշեանցի սովորութիւնն էր, որ երբ որ եւ է խոշոր նուիրատուութիւն էր անում, անմիջապէս այդ գումարն բանկի իր անձնական հաշուիցը հանում էր եւ դնում էր ամբողջապէս իր գանձապահի՝ կարգադրութեան տակ, որպէս զի այլեւս իրեն դիմելու հարկ չգրացուի, որովհետեւ ինք յաճախակի բացակայում էր Թիֆլիսից:

Վեհարանի շինութեան համար Մանթաշեանցի յատկացրած սկզբնական գումարը 250.000 ռուբլի էր, բայց ինչպէս միշտ լինում է, այդ չբաւականացաւ եւ հարկ եղաւ նոր բիւրաւորներ աւելացնել Մանթաշեանցի կտակում նշանակուած բարեգործական գումարից: Վեհարանը Մանթաշեանցի ճարտարապետի՝ Չորարեանցի հսկողութեան տակ վերջացաւ 1914 Մայիսին. բայց նա չծառայեց իր բուն նպատակին, կամ գոնէ դեռ չէ ծառայել: Շինութեան աւարտումից յետոյ, անեղ պատերազմի ժամանակ, նա վերածուեց զինուորական հիւանդանոցի. իսկ հիմայ, դարձած է Սորհրդ. Հայաստանի դորանոցը...:

Մանթաշեանց միտք ունէր էջմիածին այցելել վեհարանի շինութեան աւարտումից յետոյ, բայց անողոք ճակատագիրն ուրիշ կերպ էր տնօրինել:

(Շարունակելիս:)

ՍԱՐՈՒՅԵԱՆ



* Ես չեմ ճանաչում որեւէ անձ, որ իբրեւ գանձապահ աւելի վստահելի լինէր քան այս մարդը, Սարգիս Պոնդուկեանց, որ Մանթաշեանցի, մեծ քեանակալն էր եւ գրեթէ իր ամբողջ կեանքը անցրել էր Մանթաշեանցի գրամատակի պաշտօնի մէջ:

Stern Glaube und Stern Deutung. Die Geschichte und das Wesen der Astrologie. Unter Mitwirkung von Karl Bezold, dargestellt von Franz Boll. Vierte Auflage. Nach des Verfassers Tod herausgegeben von W. Gundel. Mit 48 Abbildungen im Text und auf 20 Tafeln sowie einer Sternkarte. XIV + 230 + XXIV S. Leipzig und Berlin (B. G. Teubner), 1931. RM. 13.60.

Հայ մատենագրութիւնը հարուստ է քաղեցութեան եւ աստղագիտութեան նուիրուած գրականութեամբ: Երբ ժողովրդագէտն այսպիսի գրութիւններու ուսումնասիրութեան միջամուկ ըլլայ, զարմանազան հաւատարմութեան, անուշներու եւ անձերու առջեւ պիտի գտնէ ինք զինքը, որոնց մասին սակայն ի զուր լուսաբանութիւն մը պիտի սպասէ այդ գրութիւններէն: Եւ այս անոր համար, որ այդ աղթարական եւ աստղագիտական գործերը յաճախ թարգմանութիւններ կամ եկամուտ տարրներ են:

Արդ այս տարտամ կացութենէն զիտնականը դուրս կորզելու պաշտօնն ունի այս գեղեցիկ գրութիւնը, ուր հեղինակն աստղագիտութեան պատմութիւնը կու տայ մեղի, վարպետօրէն մատնանշելով՝ թէ ինչ ընթացք կատարած է ան՝ հին եւ միջին դարերէն մինչեւ այսօր: Մեր քաղեցական մատենագրութիւնը քննելու ժամանակ՝ անհրաժեշտ աղբիւր պիտի ծառայէ պատկառելի երկս նման մութ կէտեր լուսաբանելու:

Հայաստան՝ աստղագիտութեան որրանին՝ Բարեւոնի կողքին ըլլալուն, շատ բան անմիջական հարադատութեամբ առած է անկից եւ մինչեւ այսօր դեռ կը պահէ սին հաւատքին մէջ: Այս տեսակէտով ալ մասնաւոր ուշադրութեան արժանի է Boll-Bezoldի գրութիւնը: Հոն հեղինակն այլ եւ այլ հին եւ նոր աղբիւրու աստղագիտութեան վրայ խօսք ըրած է՝ առանց հայկականը նկատողութեան առնելու: Չենք զարմանար. որովհետեւ հայ քաղեցութիւնը նոյն իսկ ազգային հողի վրայ չէ ուսումնասիրուած, թէեւ առատ առաղձ կայ: Կը յուսանք թէ ապագային առիթը պիտի ունենանք այս անձակ գեանին մերձենալու: Այդ առթիւ Boll-Bezoldի գրութիւնը մասնաւոր անհրաժեշտութիւն պիտի ստանայ:

Հեղինակին անչափ հմտութիւնը, պայծառ արտայայտութիւնը, կենդանի եւ գրաւիչ ոճը

կը հրապուրեն ընթերցողը եւ նիւթը նաեւ ոչ մասնագէտներուն հետաքրքրական կ'ընեն:

Այս առթիւ չենք կրնար սակայն կարծեկից ըլլալ իր ինչ ինչ ազատ դատաստաններուն, որոնք դարերէ ի վեր ընտանի եղած համոզումներու անհաշտ կ'երեւան:

Հ. Ա. ԳԱՐԱՄԱՆԼԵԱՆ

Mandelstam André N., Das armenische Problem im Lichte des Völker- und Menschenrechtes. Anhang: Die deutsch-russischen Beziehungen während der armenischen Reformation. Berlin, Verlag von Georg Stilke, 1931, 8°, S. 149. [Aus dem Institut für internationales Recht an der Universität Kiel, I. Reihe, Heft 15.] Գինը՝ M. 7.50.

Միջազգային իրաւունքի հմուտ եւ արեւելեան հարցին ծանօթ եւ քաղաքագէտ հեղինակը՝ յետասահայեաց ակնարկ մը կը նետէ Հայոց դարաւոր մարտիրոսագրութեանը վրայ չորս գլխաւոր բաժանումներով:

Ա. Մինչեւ ընդհանուր պատերազմը միջազգային պաշտպանութիւնը: — Բացարձակ առարկայօրէն կը վերլուծէ թէ ինչ նկարագիր ունէին եւրոպական պետութիւններուն օտմ. Կայսրութեան մօտ ըրած միջամտութիւնները: Նախ միակ պատճառը կը համարի Թուրքերու եւ Քուրտերու շարունակ ճնշումները (էջ 31): Երկրորդ կը շեշտէ թէ մինչեւ 1895 բոլոր մեծ պետութիւնները հաւաքաբար կը միջամտէին, իսկ անկից ետքը Ռուսաստան առանձին մնաց, մինչեւ 1914, երբ հաւաքաբար եղած միջամտութիւնը պարզապէս կերպական մնաց: Երրորդ կ'ապացուցանէ թէ՛ թէ՛ համաձայնական եւ թէ՛ զինակից պետութիւնները ինչ միջամտութիւն որ ըրած են՝ պարզապէս մարդասիրական տեսակէտով ըրած են, եւ չորրորդ թէ՛ մասնաւորաբար Ռուսաստան՝ առանց շահագիտական ձգտումի 1914 Փետր. 8ին միջազգային հակազուրի տակ Հայոց ինքնավարութեան դաշնագիրը գլուխ հանեց: Այս մասն ակնբերել կը ջրէ Ըամէթ փաշայի այն ճառը զոր խօսեցաւ Լոզանի մէջ, որով հաւաստել կ'ուզէր, թէ փոքրամասնութեանց պաշտպանութիւնը, պարզապէս եւր. պետութեանց քմահաճ միջամտութեան պատուակ ըլլար (էջ 8):